


THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԵՂԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԲԵՐԱՆ ԶԷ:

ՆԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 2

ՆՈՒ ԵՈՐԳ, ՆՈՅ. 20 1897

ԳԻՆ 3 ՍԷՆՔ

ՏԵՂԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ՍՈՒԼՈՒՆԻ ՀԵՏ

Ինչպես որ խոստացած էինք, կը հրատարակենք այսօր Սուլթանի և Տ. Թեքլի մէջ տեղի ունեցած խօսակցութեան այն մասը որ կը վերաբերի Հայ պաշտօնեաներուն:

Հայրս, Սուլթան Մէճիտ, Տաւեան տունը Հայու մը յանձնած էր կայսերական վարչակարգութեան կողմէն որ պաշտօնը: Այս մարդուն շինած վարչակարգը բաւական զօրութիւն չէր նոյն իսկ գնառակ մը նետելու այս սենեկի մէջ պատէն մը: Եւ սակայն այսպէսով կայսերական ամբողջ բանակը իւր կամքէն կախում ունէր: Շատ լաւ կը յիշեմ որ, երբ պաշտի էի Հայրս գիտ ու եղբայր Տաւեաններու տունը տարաւ, ուր քննարկեց երկու գիշեր: Տաւեան Արթին փաշա, ներկայ Արտաքին Գործերու նախարարին օգնականն է: Պէշիկթաշի մէջ Հայրս Տաւեաններուն նուերից մեծ տուն մը, որտեղ կը բնակի այժմեան Արտաքին Գործերու նախարարի օգնականը, Արթին փաշա: Բացի ասկէ Հայրս իր անձնական գանձէն եկեղեցի մը շինել տուաւ Տաւեանի տան մօտը, որպէս զի հետունքը եկեղեցի երթալու նեղութիւնը չի կրէ:

«Բէօզոլու անունով Հայ մըն ալ արքունիքի ընդհանուր մատակարարն էր, որ շքեղ ապարանք մ'ունի ի Չէնկիլիքէօյ: Հայրս ստոր տունը կերթար շատ անգամ հանգստանալու համար: Ուրիշ Հայ մ'ալ, Յակոբ էֆ. արքունի փողերանոցի վերահսակն էր: Իւր պաշտօնի բերմամբ այս մարդ մեծ հարստութեան տէր եղաւ»:

Պարտաւորութիւնը նշանուոր Հայ մը, կիւմիլի կերտան, որ արքունի դերձակապան էր, մինչև օրս ահագին հարստութիւն ունի: Տակաւին կան ուրիշներ: Պախանները արքունիքի ծառայարարները եղած են որչափ որդի:

Սուլթանի և իւր նախորդներուն կողմէն Հայերուն եղած այսքան շքանորհներուն փոխարէն անոնց ցոյց տուած «պարսխտութիւն»ը ու Օսմ. կայսրութիւնն տապալելու փառաքը ասփիտ տուած են Սուլթանին գանձապանները իր սրտակից բարեկամին: Սուլթանը Հայերու բարեկեցիկ դասակարգն ալ մասնակից նկատած է վերջի շարժումներուն: Նորին վեհափառութիւնը չէ մտապահ նաև յիշեցնել Դեսպանին այն Հայ կազմարար որ այլով մը կազմած ու նրուրիւր է եղեր Դեսպանին: Այս կազմարարը Պոլսոյ կոստանդին ժամանակ սարսափազար Մեմբրիկայ կը փախչի, բայց անգլիկներէն անտեղեակ լինելուն պատճառաւ, թշուառուառու-

թեան մէջ կկենայ, ուստի հրաման կը խնդրէ վերադառնալու համար: Սուլթանը հրաման կուտայ որ կազմարարին թոյլ արուի անարգել Պոլսու վերադառնալ, բայց զժողովարար ճանապարհի ծախք չունենալով՝ անկարող կըլլայ այս մեծ շնորհքը վայելելու: Այս լուր Պոլսու հասնելուն պէս Սուլթանը կը հրամայէ որ հազար Ֆրանքի չէք մը զրկուի Հայ կազմարարին, որ ստանալով Պոլսու կը վերադառնայ, ուր կապրի այժմ աղօթելով ամենողորմած Սուլթանին կենաց:

Սուլթանի հրամանաւ, այս սիրալիր տեսակցութենէ վերջ, Վեմ. Դեսպանին արուած է այն բոլոր Հայ պաշտօնեաներու ցանկն որք կը ծառայեն այժմ Թուրք կառավարութեան: Այս ցանկը կը պարունակէ հարիւր վեց պաշտօնեաներու անուններ, որոց ստացած տարեկան ամսականին գումարն է 1,327,860 զուրու:

Ճ. ԵԱԶԻՃԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ճ. Եազիճի, Պոսթընի Թրքական նախկին ընդհ. հիւպատոսը, որ 200 հազար տոլար խարդախութեամբ իւրացուցած ըլլալու ամբաստանութեամբ ձերբակալուած, դատուած ու բարձրագոյն ատենին տալիս յանցանքը չըսուած էր վերջերս ի Պոսթն, երկու օր ատուք 18 տարուն բանտարկութեան դատապարտուեցաւ Շէշու գատաւորի կողմանէ: Յոնցաւրի փաստարանն ի դուր տեղը գատաւորին գթութիւնը խնդրեց Եազիճիի համար, բայց դատաւորն իր վճիռը արձակած ատեն ըսած է թէ դատապարտելի անցեալ պեղլայ կեանքին մէջ չէ կրցած պարագայ մը գտնել՝ պատիժը գէթ քիչ մը մեղմացնելու համար:

Եազիճի ձերբակալուած ատեն ամէն ճիգ ի գործ դրաւ փախուստ տալու համար Ամերիկեան դատարաններէ, Թրքական հպատակութիւնն իրր արացոյց գործածելով, բայց այդ ամէնն բաւական չեղաւ ազատել Թուրք կառավարութեան արժանաւոր ներկայացուցիչը:

ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸ

Կը լսենք թէ Փարիզի Հայ ուսանողները հայերէն թերթ մը պիտի սկսին հրատարակել Ճրանասյի մայրաքաղաքին մէջ, Յունվարի մէկէն սկսեալ:

ՉԲԻ ՂՐԿՈՒԱԾ ԹԵՐԹԵՐՈՒ

Կարոնները արժէք չունին: Ոչինչին փոխարէնը ոչինչ է: 0 = 0:

ԹՈՒՐԻՔ-ԳԵՐՄԱՆ ՆԻՉԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ

Ուրբա՛ ժէջ Նոյ. 16 Թուրքականաւ Լոնտօնէն հեռագիր մը կը յայտարարէ թէ նոր նիզակակցութիւն մը կազմուած է Գերմանիոյ և Թուրքիոյ միջև, և կը յաւելու թէ այս լուր մեծ շփոթութիւն յառաջ բերած է քաղաքական շրջաններու մէջ:

Գերմանիա, կրօն հեռագիրը, շատնց կը ջանար ապահովել ինքզինքը՝ մէկ կողմէն Անգլիոյ և միւս կողմանէ իր սպաննացող զրացուցիչ դէմ: Գերմանիոյ դէպի Թուրքիոյ ցուցուցած բարեկամութիւնը կը հաստատէ այս իրողութիւնը, ինչպէս նաև իւր շահագիտական նպատակները Թուրքիոյ մէջ:

Գերմանական Արտաքին Գործոց նախարարութիւնը կը ջանայ ուրիշ կարգ մը գերմանացի զինուորական գործիչներ ևս ընդունել տալ Թուրքիոյ:

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Ն Ո Ւ Ր Ք

Վիեննա, Նոյ. 15. Պալքաններու մէջ մտահոգութիւն պատճառով նըշաններ կան. յորաբերութիւնը ձգտեալ կերեքն Դրան և Պուլկարիոյ միջև: Սուլթանը պատրաստուելու համար ամէն հաւանականութեանց առջև, 100,000 Թրքական զօրք կը զըրկէ Պուլկարական սահմանագլուխը: Մազէրի հրացաններով զինեալ: Մակեդոնական խառնակութեան մը առթիւ Սերպիա ձեռնպահ չպիտի մնայ անշուշտ. մինչ Ալպանիոյց եկող վերջի լուրեր կը հաւաստեն թէ ընդհ. անհանգստութիւն մը կը տիրէ հոն: Ի մի բան քաղաքական հորիզոնը ամպոտ է յարեկել:

Լոնտօն, Նոյ. 16. Թուրք կառավարութիւնը պատասխանելով Աստրօ-Հալիքարական Դեսպան Պատօն Տը Բալիտի մի պահանջագրին, կը ծանուցանէ թէ յանձն կառնէ պաշտօնանկ ընել Մերսինի Մաթէսարիքը ու Ատանայի Վալին, և ողջունել Աստրիական զօրակը ի հատուցումն նոյն կառավարութեան հպատակներէն Պըրազօֆօլի վաճառականին դէմ եղած նախատանայ:

Մերսինի ջուրերը գտնուող երկու Աստրիական զրահաւորներու հրամանատարներն հրահանգ ընդունած են իրենց կառավարութիւնէն ուժով կոծել Մերսինը, եթէ Թուրք կառավարութիւնը միջնա յառաջիկայ հինգ շաբթի կէսօր գոհացում չի տայ Աստրիոյ պահանջներուն:

Հէր Պրազօֆօլի Մերսինի մէջ վաճառական մէ, և գործակալ Լոյսի

չողենաւային ընկերութեան: Այս անձ անցեալ ամիս իբր կասկածելի և Տաճկական շահուց զնասակար որ տեղական կառավարութեան կողմէն արտաքուստ էր Մերսինէն: Մի հեռագիր կը ծանուցանէ թէ այս Աստրիացիին բուն յանցանքը եղած է ճամբու աման տոմսեր վաճառել, ու զիւրութիւններ ընծայել Հայ գաղթականաց:

Լոնտօն, Նոյ. 16. Աստրիա կը պահանջէ Թուրք կառավարութիւնէն 250,000 տկր, Արեւելեան երկաթուղեայ միջոցաւ, Յունական պատերազմի ժամանակ, փոխադրուած արձիկ բանակի փոխադրութեան ծախք: Եթէ Դուրը մերժէ գոհացում տալ այս պահանջին, Աստրիական Դեսպանը պիտի մեկնի Պոլսէն:

Վերջի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Թուրքիա տեղի տուած է Աստրիոյ այս պահանջին:

ՀՐԱՒԷՐ

Հայ Երիտասարդաց Յառաջիմական Ընկերութեան ընդհանուր ժողովներն, որք ամառուայ առթիւ գաղտնիք էին, այս երեկոյ, Նոյ. 20ին կը վերսկսին: Ընկերութեան նպատակն է հրահանգիչ տանախոսութիւններու միջոցաւ Հայ Գաղթականաւորութեան մտաւոր զարգացման գործին համար աշխատիլ: Այս երեկոյ, ժամը 8ին Ընկերութեան այս շրջանի Ա. ժողովը տեղի պիտի ունենայ թիւ 220 Իսթ 23րդ փողոցի եկեղեցին:

Ընկերութիւնս յարգանք կը հըրաւիրէ Հայ ընտանիքները ևս:

Ատենախօսք
Տըթ. Մ. Մ. Գորբիշեան, Նիւթ—Ճմարտութիւն. Պ. Գ. Սվաճեան, Նիւթ—Ազատութիւն. Պ. Զ. Յովսափեան, Նիւթ—Կրօնք:
Դաշնակ—Պ. Մ. Թաշեան
Երգ "սօր"—Պ. Մ. Չափազանցան
Ի Իրմաց Հ. Ե. Յազար—Ընկեր.

ՆԱԽԱՅԻՆ ԼՈՒՓԵՐ

(Այս սիւնակի մէջ կը հրատարակենք այսուհետեւ Երոպայէ եկող այն շողենաւորութեան անուններն, որ անոնց հասնելու թուականներն, որք ընդհանրապէս գաղթական կը բերեն յ'Ամերիկայ):

Երեկ հասած են հետեւեալ շողենաւոր
Սէնթ Լուիզ, Սաութհամթընէն
Լուքսեմբուր, Լիվրփոլէնէն
Այսօր կապատուի
Փրուսիա, Համբուրգէն
Վաղը Նոյ. 21ին
Քամփաները, Հիլլէն:



ՇԱՐԱԲԱՌԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր ՏԻԳԻՐՍ Հրատարակչական Ընկերութեան կողմէն:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ

ՔԱՌԱՆՈՐԻԿ ԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՅԵԱՆ ԱՆՁԱՆԳԱՅ ՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ՝

	Տող.	Սէնթ
Տարեկան	1	50
Վեցամսեայ		75
Եռամսեայ		40

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 10 Ֆր.

Բաժանորդագրին կանխիկ է:

Հասցէ՝

To the DICKENS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՆՈՅ. 20 1897.

ԹԵՐԹԻՆ ՊԸՏԻԸ

Նիւ Եօրքի և չըջակայ, մօտաւորապէս, 5,000 Հայ գաղթականութեան հասարակական ընթացիկ հարցերի, այրող խնդիրները և հետզհետէ կուտակուող կնճռոտ գործերի ուղղութիւն տուող ժողովրդական թերթի մը պէտքը զգալի էր:

Մի այսպիսի կեդրոնում՝ ինչպէս է նիւ Եօրքը, մինչև վերջերս Հայ գաղթականութեան առօրեայ ընթացիկ խնդիրները, օգտակար ձեռնարկութիւնները, շատից-քիչից եղածները անխնամ՝ երեսի վրայ ձգուած թողուիլը պէտք է վերագրել թերթի չ'գոյութեան:

Հայի անունով այս կամ այն անձի հրապարակուած կամ գաղտնի ասպատակութիւնները, շահատակութիւնները, ազգային և ընկերական բարքերի խնդարթութիւնը, Հայ երիտասարդութեան կեանքին մէջ երբեմն երբեմն իրարու, Հայ անուան մօթ, մարդկութեան անվայել ընթացքը, նոյնպէս, մասամբ, պէտք է վերագրել ազգարար թերթի մը չ'գոյութեան: Այս և սոյնանման հայութեան կեանքում յաճախ պատահող տխուր փաստերը մի առ մի յիշատակելը թողնելով ապագային՝ գանք նոյնիսկ բուն խնդիրն:

Նկատի ունենալով այս փաստերը՝ ՏԵՂԱԿԱՆ ազգային թերթի մը պէտքը շատ զգալի էր, և ուղղամիտ երիտասարդութիւնը, սակայն, որը միայն խորապէս զգուժ էր և հեռատեսութեամբ նկատում էր Հայ գաղթականութեան գահաւիժման մօտենալը, չը հանդուրժեց, չէր կարող սառնասրտութեամբ նայիլ այս կարգի խնդիրներու վրայ, յանուն ժողովրդի և հանրային շահերի, համեստ կերպով հրապարակ եկաւ, ո՛չ միայն այս ամենակենսական պէտքը լրացնելով, այլ տեղական թերթի մը միջոցաւ գաղթականութեան համար կենսական և օգտակար խնդիրներուն ուղղութիւն տալով:

Գործը ահագին է, կոչումը բարձր, և իր վրայ առած պարտականութիւնը ծանր և պատասխանատու. թէ որքան

նա կարող պիտի լինի իր կոչումի բարձրութեան վրայ անասան մնալ, իր ծանր պարտքերը անթերի կատարել, ցոյց կուտայ ապագան:

Իսկ տանջուած ժողովուրդ, դու ալ առաջին համարը հետաքրքրութեամբ կարդալով չը բաւականանաս, լուկ հոգեկան րոպէական ուրախութեամբ. հանդէս է եկել քո շահերին պաշտպան մի թերթ: Դու ալ ունիս փոխադարձ պարտականութիւններդ. լրջօրէն խորին ուշադրութեան ա՛ռ քո իսկական շահերդ, և քո կողմից մի խնայել բարոյական և նիւթակոն օժանդակութիւն տեղական այս կարևոր թերթին:

Հ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆՑ

ՅՈՒՍՍՏՈՒ ԵՐԵՒՆԻՑԻՆԵՐ

Նիւ Եօրքի Հայերը վերջապէս կ'արթնան վերջին երկու տարիներու մեռելական անշարժութենէն:

Կոտորածներու խշխշալի գոյժերու մահազգեցիկ տխրութիւնը, արհաւիրքը, որոնք պահ մը, ինչ երկար պահ, ողբալի կերպով շատած էին Հայ գաղթականութեան բոլոր ոյժերը, բոլոր շարժումները. յուսահատութեան սև քողը որ փռուած էր ինչպէս ըզրանդակ, նոյնպէս տեղական Հայերու գլխուն, կարծես թէ կ'անօրանայ:

Այս վերջին ամիսներուն մէջ անգլիական Հայերը, լաւ, երիտասարդութիւնը, եթէ կուզէք, կ'զգայ թէ քաջութիւն չէ անյուսութեան թանձր քողին տակ հեծկլտալը. կը պատուէ քողը. նոր կեանք կ'առնէ. իրեն համար վերին աստիճանի օգտակար ձեռնարկներ կ'ընէ: Նորանոր երեւոյթներ կը պարզուին տեղական Հայերու կեանքին մէջ:

Գաղթականութիւնը արտասուազին հառաջանքով աչքերը յարած է ամենահեռու որ կրնաւ էր հայրենիքին վրայ. միևնոյն օր մասնակ սկսած է ճիգեր ընել, իր անմիջական բարեկաւութեան վրայ խորհիլով, այս օտար աշխարհին մէջ:

Ինչ բաներ որ հայութիւնը պահանջած էր, հայրենիքին մէջ, նոյն իսկ իւր արևուն դնով, ու զլացուած էր իրեն, գաղթականութիւնն կը փորձէ գէթ իւր այս նոր կեանքին մէջ վայելելու զանոնք:

Բարբարոսութիւնը զլացած էր իրեն համար ազգային ընկերակցութիւնները. գաղթականութիւնն կը հիմնէ այս տեղ ազգային ընկերութիւններ. Թրքական տգիտութիւնը ուրացած էր իրեն համար ուսումնական հաստատութիւնները: Հայ երիտասարդութիւնը կը կազմէ յոռաջողիմական ընկերութիւն մը, որուն նպատակն է ճաշարաններու վատ մթնոլորտէն ազատել Հայերը, և հրահանգիչ ատենախօսութիւններու միջոցով, ամէն տեսակ նիւթերու վրայ, գաղութի մտաւորական դարգացումի վսեմ գործին աշխատիլ: Գաղթականութեան տապանակ ուխտին՝ Հ. Ե. Գրադարանը՝ որ տարիներէ ի վեր չըջած էր, մօտերս կը հաստատուի մասնաւոր սենեակի մը մէջ: Կուենեանք մ'եր ընթերցարանը:

Տաճկական տգէտ, խղճի ու մաքի վրայ բռնակալ գործնիչը կ'արգիլէր մեզ ազատ մտնուլի մը բոլոր բարբիքները. հոս տեղ կը հիմնուի ազատ մամուլը՝ գաղթականութեան կեանքով զբաղելու յատուկ ուղղութիւնով: Հաճելի իրողութիւններ... Յուսատու երևոյթներ...:

ՎԵՑ ԹՈՒՐԻՔԵՐ Ի ՔԱՍՏՆԻ ԿԱՌՏՆ

Բասըլ Կառտընէն մեզ կը հաղորդուի թէ 6 Թուրքեր, որոնք անցեալ օր Բալիֆօրնիայ նաւով Սիւրիայէն նիւ Եօրք հասած էին, Գաղթականութեան Վարչութեան կողմէ վար դըրուած են, պար ապէս այս խիստ որոշ պատճառին համար թէ Ամերիկայի Գաղթականական Օրէնքը բացարձակապէս կարգիլէ բազմակիսի մը կամ բազմակիսութեան վարդապետութեան հետևողի մը Ամերիկայ ընդունուիլը:

Պ. Արպիլի, Բասըլ Կարտընի Արևելեան լեզուներու թարգմանը, որուն յանձնած էր Վարչութիւնը 6 Թուրքերու խնդիրը քննելու և տեղեկագրելու պաշտօնը, մասնաւորաբար Վարչութեան ուշադրութիւնը հրահրեց հետևեալ քանի մը իրողութիւններուն վրայ:

Նկատելով որ Ամերիկայի Գաղ. Օրէնքը կ'արգիլէ բազմակիսութեան վարդապետութեան հաւատացողի մը մուտքը Ամերիկայ:

Նկատելով որ Գուրանը որոշապէս կը թոյլատրէ Մահմետականի մը այնքան կին առնել որքան որ կը ներքէ իւր քսակը և քամահաճոյքը:

Նկատելով որ այս Թուրքերը յայտարարած են թէ իրենք պիտի գործադրեն Գուրանի պատուէրները, և հպարտութիւնով յայտարարած են թէ «անհաւատ շուներու» երկրին մէջ մազի շափ չ'պիտի շեղին Գուրանի հրամաններէն, ուստի Պ. Արպիլի օրէնքին հակառակ կը գտնէ թուրքերու Ամերիկայ ընդունուիլը:

Չորեքշաբթի օրուայ Գաղթականական Վարչութեան ժողովը օրինաւոր գտաւ Պ. Արպիլի տեսութիւններ և որոշեց որ թուրքերը ևս զրկուին:

Պ. Արպիլի աւելի առաջ երթալով կըսէ այս մասին տեղական թերթերու մէջ թէ ինքը Գուրանը լաւ ուսումնասիրած ըլլալով, մահմետականութեան վրայ յստակ գաղափար ունի. Մարգարէին, կըսէ Պ. Արպիլի, հարցուած է եղեր որ մը թէ քանի կին կարելի է առնել: Մարգարէն պատասխանած է ըսելով «Ամուսնացիր քու տեսած զեղեցիկ կիներու երկուքին, երեքին, կամ շորսին հետ, այս պայմանաւ որ կրնաս արդարութիւնով պահել վերները»:

Հարկ է յիշեցնել, կըսէ Պ. Արպիլի, թէ հիմակ պատերազմի վտանգ կայ Արևելքի մէջ. եթէ մեր դուռերը բաց ըլլան Տաճիկներու առջև, զինուորական ծառայութեանէ փախչիլ ուղղութեամբ Ամերիկայ պիտի դիմեն, և հետևաբար բազմաթիւ հարէմներ պիտի ունենանք այս երկրին մէջ, որոնք ամէն մէկը, Գուրանի վարդապետութիւնով, մէկէն մինչև յիսուն կին կրնան պարունակել:

Գաղթ. Վարչութիւնը այս խնդրով հետաքրքրուած է մասնաւորապէս, որովհետև կ'ուզէ վերջնականապէս ճշդել օրէնքին գործադրութեան սահմանը սոյնօրինակ խնդիրներու մէջ: Օրէնքը շինուած է նկատի ունենալով ո՛չ այնքան մահմետականները՝ որքան մ'որմոնները. Վարչութիւնը կ'աշխատի, իբր օրինակ ուրիշ առիթներու, կարգադրել այս խնդիրը: Պ. Արպիլի կը կարծէ թէ Ամերիկայ արդէն եղող մահմետականները ուրացած են Գուրանի պատուէրը որով կրցած են ներս մտնել:

Թրքական հիւպատոսը դիմում ըրած է Ուաշինկթըն արհամարհելով Պ. Արպիլիի առարկութիւնները:

Հետաքրքրութիւնով կ'սպասուի Ուաշինկթընի Գաղթականական Վարչութեան վերջնական որոշումին:

Չ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

ՀԱՅ—ՎԱՆ—ՍԱՐԳԻՍԸ

Վանցիին մէկը, խեղճ ու կրակ երիտասարդ մը, կըսուի թէ օր մը խնդրելու համար: Հայրիկ անսնելով տղուն խեղճ վիճակը, հետաքրքրուելով կը հարցունէ:

- Տղայ, ինչ էս դուն:
- Մտայ եմ կարգիդ, Հայ:
- Ո՛ւր էս ծնած:
- Մտայ եմ, Վան:
- Ինչ է անունդ:
- Մտայ եմ, Սարգիս:
- Հայ—Վան—Սարգիս:
- Եւ Հայրիկ օգնեց խեղճին:

Գատարկապորտը — Ինծի ողորմութիւն մը տուր, Պարոն. մենք՝ երկուքս բազմակիցներ ենք այս աշխարհի վրայ:

Գիր մարդը (տարկացած) — Ինչ ըսել կ'ուզես:

Գատարկապորտը — Երկուքս ալ ծանր բեռ մ'ունինք տանելիք այս կեանքի մէջ:

—Հայրիկ, ըսաւ պզտիկ Թովմասը իր մեծ հօր՝ անոր կուտու գըլուխը ալէկ մը զննելէ վերջ, կըրնամ հարցում մը ընել:

—Անտարակոյս:

—Մարդիկ ամենի՞նք կը սանրես Հայրիկ:

Պզտիկ տղան — Պ. Ոստիկան, երկու կիներ վարի փողոցին վրայ զիրար կը զգզեն կոր:

Վախկոտ Ոստիկանն — Կորսուէ բանդ զնա՛, քու ինչ ո՞ւր է պէտք:

Պզտիկ Տղան — Բայց Պ. Ոստիկան, կիներու միջև քու ամուսնիդ է:

Վախկոտ Ոստիկանն — Ատուած ողորմի միւս զժառանգին:

Ի Մ Ա Ս Տ Ո Ւ Ն Խ Օ Ս Ք Ե Ր

—Ոսկին հաց կուտայ, բայց հաց չէ:

—Ամենէ գէշ մարդը այն է որ ո՛չ բարեկամ ունի և ո՛չ թշնամի:

—Մի ջանար ընել ինչ որ հակառակ է բնութեան: 2 անգամ 2ը հինգ չընէր:

—Ամենը ընտիր և զօրաւոր մեքենան այն է որ գործած ժամանակ ձայն չի հաներ: Չոյն ընող մարդոց զօրութիւնը ձայն ընելու համար կը մսխուի՝ փոխանակ արդիւնք մը յառաջ բերելու:

—Առանց վնասի օգուտ անկարելի է սպասել: Հողալ սորվելու համար հարկ է ջուր մտնել:

—Խօսիլը արծաթ է կըսեն, իսկ լռելը ոսկի. բայց խորհիլով խօսիլը թէ ոսկի է և թէ արծաթ:

—Եթէ կուզես հասնիլ, մի՛ վազել. վազողներուն չէ ճամբան:

—Մի՛ յուսահատիր երբ անյաղութեան հանդիպիս. յաջողութիւնը, զալէ առաջ անյաղութիւնը կը զրկէ մարդուն՝ անոր արժանիքը սորվելու համար:

ԱՆԳՈՐԾ ԱԶԳԱՍԷՐԸ

—Հացի խնդիրս ապահովեալ է, կուզեմ Հայոց բարիք մը ընել, ու Հայկական դատը ձեռք առնել. կը խնդրեմ օժանդակ եղիք ինձ:

—Կը հաճի՞ք ինձ ըսել, բարեկամ, թէ որչափ ասնէք ի վեր անգործ էք: ՍՈՒՐ—ԵՐԿԱԹ

ԿՏՐՈՆ ՏԻԳՐԻՍԻ,

ԹԻԻ 2

ՆԻԻ ԵՌՐԻ, ՆՈՅ. 20 '97

ԳԻՆ ԵՐԿՈՒ ՍԷՆԹ

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԵՒ ՏԱՌԱՅԱՂ

«ՏԻԳՐԻՍ ԼՐԱԳԻՐ» բառերուն մէջ գտնուած տասերկու տառերով կազմուած է այնչափ հասարակ բառեր որչափ որ կարելի է: Սա տառերով ամենէ աւելի բառ կազմող երեք անձինք պիտի ստանան հետեւեալ նուէրներն. Առաջինն՝ մի ժամացոյց. երկրորդը՝ մի գրիչ, իսկ երրորդը՝ մի գովազդ: Սա մրցում պիտի գոցուի հասանազանարար՝ ներկայ տարւոյս հետ, ու արդիւնքը ծանուցուի նոր Տարիի առաջին թուով: Խնդրուած բառերը կազմելու մասին յասակ գաղափար մը տալու համար օրինակով բացատրենք: Առէք «գրագիր», լրատար ու տարի», բառերն: Եթէ ուշադրութիւն ընէք, պիտի տեսնէք որ այս բառերուն մէջ գործածուած բոլոր տառերն «ՏԻԳՐԻՍ ԼՐԱԳԻՐ»-ի մէջ կը գտնուին: Աւելորդ է ըսել թէ խնդրուած բառերուն մէջ բաց ի յիշեալ տառերէն ուրիշ գիր գտնուելու չէ:

Պայմանք.— Սա մրցման պիտի մասնակցին բաժանորդք միայն: Պատասխաններու հետ շրջապատ է մեզ հինգ հատ երկու սէնթիոց նամակագրութիւն, կամ 12 կարոն:

ԵՍ ԿՈՒՂԱՄ

Վերջապայուն իւր ցուբերով կարմրորակ, Մինչ ամպոց դէպ կ'ոսկեզօծէ գեղունակ, Եւ մինչ երկինք, վարդ այտերով հրավառ, Ժպիտ ցանէ զուարթարար, կենարար: Ես կուլամ:

Ի գիշերին յորժամ աստեղք լուսավառ, Ճակասն երկնից լուսազարդ են, Կանգմեն պար, Լուսին չքնաղ յորժամ զեղով կուտական, Վերուստ առ մեզ հեղու ժպիտ մշտական, Ես կուլամ:

Յորժամ գարնան հնչէ օսկի այն զանգակ, Եւ բնութիւն նուագէ երգ ներգաշնակ. Յըսփոփանս գառն ցաւոց այս կեանքին, Աինչ կը շնչէ քաղցրիկ զեփուս գովազին, Ես կուլամ:

Իսկ յորժամ մի Հայ գեղուհի անբիծ կոյս, Ժպտով մը սուրբ փարատէ մէգն իմ հոգոյս, Եւ պարզեւէ ինծի սիրոյ մի նոր կեանք, Յորում ցիրեար սիրել, գգուել միշտ գիտնանք, Ես է՞ր լամ: Նայաք, նոյ. 2 Գ. ԹՈՎԱՄԱՍԵԱՆ

Մ Ա Ն Ր Ա Ղ Ո Ւ Ր Ք

—Վաղը Արժ. Վահրամ Բահանայ Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ս. Ոսկերեան Եկեղեցոյ մէջ: Այս առթիւ նորին Արժանապատուութիւնը կը խնդրէ բարեպաշտ ժողովրդէն յետ միջառուր, ժամը ճիշտ մէկին ներկայ գտնուել որպէս, զի պաշտամունք ժամանակին սկսին:

—Ազգային հոգաբարձութիւնը երէկ ժողով ունեցաւ՝ եկեղեցական ինչ ինչ կարևոր խնդիրներու վրայ խորհրդակցելու համար:

—Տիար Բէպակեան Նիւ Եորքի Հայոց վիճակագիրը կը պատրաստէ:

—Լրագրոյս Վարչութիւնը Բասթի կարտընի Հայ պաշտօնէին հետ մասնաւոր կարգադրութիւն ըրած է ամեն նորեկ Հայ գաղթականի մասին լուր հաղորդել մեզ ի հրատարակութիւն:

—Վաղը 23րդ փողոցի եկեղեցիին մէջ ժամը 2ին Աստուածաշնչի դաս պիտի տրուի Պատ. Յակոբեանի կողմէ, նիւթ՝ Աւետարանի զօրութիւնն: Ժամը երկուք ու կէսին քարոզ պիտի խօսուի Նիւթ՝ Բրիտանոսով զօրանանք:

—Կը լսենք թէ Սերաստոյ Ազգային Որբանոցի օժանդակ ընկերութեան ընդհանուր ժողովը իւր Ա. նիստն ունեցրէ անցեալ Կիրակի: Ժողովը ընտրեւ է Յանձնախումբ մը որ անհրաժեշտ եղած բարեփոխութիւններ մտցնելով օրինաց մէջ արդիւնք ներդրայցնէ ընկերութեան յաջորդ ժողովին:

—Յառաջադիմական ընկերութիւնն մի ընդհանուր ժողով ունի այս երկու 23րդ փողոցի եկեղեցոյ սրահին մէջ: Այս առթիւ պիտի խօսին Տեթ. Գարբիւնեան, Պ. Սվաճեան և Պ. Յովսէփեան:

—Անցեալ Կիրակի օր Պատ. Հայկակ խաղօտան հանգանակութիւն բացաւ նոյն օրուայ ազօթքի ժողովքէն վերջ, եկեղեցոյ վարձքը վճարելու համար: Հանգանակութեան արդիւնքը եղաւ 300 Տօլ. չափ. Եկեղեցիին տարեկան վարձքն է 156 Տօլ. այսինքն շարքեր երեք տօլար:

—Պ. Յ. Տիտեան մետաքսայ ժապաւէն հիւսելու գործարան մը սկսելու վրայ է:

—Բաղաբիս 13րդ փողոցին վրայ գտնուող մետաքսի գործարանն, ուր մի քանի Հայեր կ'աշխատին՝ կը փոխադրուի այս շարքու 26րդ փողոց:

—Մեծիկեան Եղբարք Բոլոմպոս Աւլընի վրայ արեւելեան ապրանք ընդարձակ վաճառատուն մը բացած են:

—Լրագրոյս առաջին թուէն օրինակ մը տեսնուած է քաղաքիս տաճկական Հիւպատոսի սեղանին վրայ, անցեալ երկուշաբթի առաւօտ:

—Պղզիւքէնցի Սերովբեան անուն Հայ մը անցեալներն Բասթի կարտընէն ետ զրկուեցաւ աչքի սկարուութիւն ունեցած ըլլալուն համար: Սէրովբեանի եղբայրը, Պ. Արշամ Անտոնեան և երեք փաստաբաններ ամէն ճիգ թափեցին ընդունել տալու համար նորեկ գաղթականն, որուն եղբայրը 120 տօլարէ աւելի ծախք ըրաւ այս մասին իրօք տեղը:

—Պ. Յովհ. Անտոնեան ասկէ երկու տարի շափ առաջ դատ բացած էր Պ. Տիրատուրեանի գէմ՝ պահանջելով անկէ 5.000 տօլար փնաւ, վերջնոյն ամբաստանութեամբ յանդիման բանտարկուած ըլլալուն համար, խարդախեալ պարտաւորակի մ'առնութիւն: Այս դատ անցեալներն տեսնուեցաւ Պրուքլինի Բարձրագոյն Ատենին առջև երգուեալ դատաւորաց (ճուրի) ներկայութեամբ՝ որք զՊ. Անտոնեան անիրաւ գտան:

—Երեկ երեկոյ Հայկոյն. Կաճառի Բ. շրջանի զինուորական կրթութեան Բ. մարզանքը տեղի ունեցաւ իւր յատուկ սրահին մէջ. մարզուողներու թիւը 50ի մօտ էր: Բաւական թուով Հայեր ներկայ էին մարզանքին իբր հանդիսատեսներ:

—Հայ Աւետարանական եկեղեցիին վաղը (նոյ. 21) իր առաջին տարեշրջանը կը լրացնէ. այս առթիւ պաշտամունք պիտի կատարուի առաւօտեան ժամը 11ին: Բարոզին նիւթն է «Տարի մը վերջ»:

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ե Ա Ն Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

«ՏԻԳՐԻՍ»-Ի ՄԱՍԻՆ

Արժ. Վահրամ Բհ. Մարկեան— «ՏԻԳՐԻՍ»-ը ամէն մարդ կը հաւնի. անոր ժողովրդին մէջ գտած ընդունելութիւնը շատ գոհացուցիչ է: Յաջողութիւն կը մաղթեմ:

Պատուելի Յակոբեան կը գըրէ— Ուրախութեամբ տեսանք ՏԻԳՐԻՍ շարքաթերթի առաջին թիւը: Ամէն ոք անոր հայերէն ոճերն ու յօդուածները կը գովէ: Աս երկրին մէջ այսպիսի թերթ մը պէտք էր: Ուստի խընդակցութեամբ կը շնորհաւորեմ նորա հրատարակութիւնն, և յաջողութիւն կը մաղթեմ նորա բազմաշխատ հրատարակչոց:

Տեթ. Գարեգին Սիւնի կ'ըսէ— ՏԻԳՐԻՍ-ի ուղղութիւնը կը գովեմ. առջին թիւն մէջ հրատարակուած Պօլսոյ նոյ. 13ի հետաքրքրուն ցոյց կուտայ թէ հրատարակչք ո՞ր աստիճանի կարեւորութիւն կուտան լուրերուն: Կը շնորհաւորեմ զիրենք ու յաջողութիւն կը մաղթեմ:

Պ. Յ. Երկանեան ըսած է— Կը յուսամ թէ անկողմնակալ թերթ մը որ կը պաշտպանէ տեղական Հայ ժողովրդի շահերը, կրնայ յաջողութիւն յուսալ:

Նիւ Եորք, նոյ. 16

Տ Ե Ր ԽՄԲԱԳԻՐ ՏԻԳՐԻՍԻ,

Պատիւ ունեցայ ընդունելու Ձեր հետաքրքրական լրագրի անդրանիկ թիւն, բոլորովին նոր ու տարբեր մինչ յայժմ մեր մօտ հրատարակուած հայերէն թերթերու ուղղութեան:

Առաջին տպաւորութեամբ, ՏԻԳՐԻՍ-ը, գաղթականութեան պահանջութեան համաձայն, ժողովրդական մի լրագիր նկատեցի:

Ուրախ եմ որ ՏԻԳՐԻՍ-ը չէք ուուցած միայն Ձեր Խմբագիրներուդ համար հրատարակել, այլ աշխատած էք օգտակար հանդիսանալ հասարակութեան, լինելով արձագանք մեր սրտի արդար պահանջութեան:

Կը շնորհաւորեմ Ձեր առաջին և օգտակար քայլը:

Մնամ անկեղծ Ձեր

Ա. Մ. Ծ.

Նայաք, նոյ. 16

ԽՄԲԱԳԻՐ Տ Ե Ր,

Ձեր ՏԻԳՐԻՍ-ը ընդունեցի այս առաւօտ, և շատ գոհացուցիչ գտայ: Կը շնորհաւորեմ այդ ընկերութիւնը: Եւ եթէ այս ուղղութեամբ շարունակուի, ՏԻԳՐԻՍ-ի մեծ յաջողութեան տարակոյս չի կայ: Գ. Թ.

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԱՍԵՐ

ԻՍԹ 23րդ փողոց 2րդ և 3րդ Ավ. նիւներու մէջ գտնուող թիւ 40 հասարակաց դպրոցին մէջ Հայոց համար անգլիերէր դասախօսութիւն կը լինի ժամը 7-30 էն 9-30: Լաւ առիթ մըն է օգտուելու այս ձրի դասախօսութիւններէն որոնք կ'աւանդուին Հայ ուսուցիչի մը կողմէն գիւրուուացիչ եղանակով: Վ. Յ. ՃԻՆԻՇԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ԽԱՅԵՐԵԱՆ

Ժ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ

Թիւ 388 3րդ Աֆիւ, Նիւ Եորք: Կը նորոգէ, խիստ չափաւոր գընեւորով, պատի և գրպանի ամէն տեսակ ժամացոյցներ: Բոլոր դիմողներն գոհ պիտի մնան:

Ս. Ր Օ Ջ Է Ն Ս Ո Ի Է Կ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Դերձակի վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներ. մետաքսայ սընդուս, ապըրուս, թաւիչ, կոճակ և այլն, խիստ աժան գներով: Հայ գերձակներուն համար մասնաւոր զեղջ, եթէ ՏԻԳՐԻՍ-ը ցոյց տան: 72 ՕՐԶԸՐՏԷՐԱԾՐԻՏ, ՆԻԻ ԵՌՐԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

ՇԱՀՊԱՅԵԱՆ ԵՒ ՍԱՐԱՅԵԱՆ

Թիւ 239 Իսթ 27րդ Փողոց,

ՆԻԻ ԵՌՐԻ:

Պատիւ ունին ծանուցանել թէ նոյ. 22էն վերջ իրենց գներուն վրայ նոր գեղջ մը ևս պիտի ընեն, ամենահամեստ քանակներուն անգամ շիւրամատչելի ըլլալու համար: Հակառակ այս զեղջին կերակուրներուն քանակութիւնն, մաքրութիւնն և այլ ամէն ինչ նոյն պիտի պահուին:

Շարքաթական «պօստ», մէկ ու կէս տօլար. երեք և կէս տօլար թիւքէթները երկուք ու կէս տօլարի միայն:

ՃԷ՛ՅՄԸՍ ՍԱԿԸՐ

Վաճառական ամէն տեսակ ընտիր ասուեղէններու, խիստ գոհացուցիչ գներով. Հայ գերձակներ կըրնան իրենց ասուեղէնները գնել այս տունէն շատ աժան գներով: 246 Գանալ Ըսթրիթ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Պ. Գ Յ Ո Ր Գ Ա Ղ Ո Ի Է Ս Ե Ա Ն

Թիւ 388 Երրորդ Աֆիւ,

ՆԻԻ ՈՆՐԻ:

Դիւրամատչելի գներով արևելեան մաքուր կերակուրներ:

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,

Ա Ռ Ա Ջ Ն Ա Կ Ա Ր Գ Դ Ե Ր Ջ Ա Կ :

Թիւ 628 3րդ Աֆիւ, Նիւ Եորք:

ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ընտիր կերպասեղէններէ վայելուչ Հագուստներ կը շինէ գիւրամատչելի գներով:

ՈՒԻՆՏԶԸՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ,

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ,

472 3րդ Աֆիւ, Նիւ Եորք:

Յ.Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ պատիւ ունի ծանուցանել թէ գեղագիրներ կը պատրաստէ խիստ աժան գներով:

ԱՆԴԱՐՄԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ

Շարունակութիւն

"Այս ըսելով մեկնեցաւ սենեկէն և մեզ ձգեց մի խորունկ և անառիկ սենեկ մէջ. կարծես իր աչքերուն մէջ մարգարէական արտայայտութիւն մը կար":

"Մի քանի օրի մէջ ամէն բան պատրաստ էր մեկնելու համար":

"Ամպոտ օր մը ճամբայ ելաւ Մարգարիտ. իրեն հետ ամէն ուրախութիւն անդարձ կերպիւ հեռացաւ մեր տունէն: Մնայուն տխրութիւն մը գրոշմուած մնաց այդ օրէն ծնողացս ճակատին վրայ: Երբ վերջի անգամ համարեցի պնդոր պարկերն, նա մեղմիւ մը ըսաւ ականջիս՝ ինչու բրկը պայպէս, Արմէն, ինչու մատնեցիր զիս":

"Տարիներ անցան, բայց Մարգարիտ ետ չի կանչուեցաւ Անգղիայէն: Իր նամակներուն մէջ պահեալ կէտ մը կար միշտ: Մեր բոլոր հարցմանց կը պատասխանէր մանրամասնաբար, բայց իր անձի նկատմամբ եղած ամէն հարցում մ'անպատասխանի կը մնար, ոչ ալ բառ մը կը գրէր վերադառնալու համար":

"Հայրս զզջացեր էր իր յախուռն ընթացքին համար: Պատրաստ էր զայն արդէն տուն կանչել, եթէ թելադրութիւն մը կամ խնդիր մը գար Մարգարիտէն: Բայց հէգ աղջիկն ոչինչ կը գրէր այդ մասին. կարծես ուխտած էր չի վերադառնալ հոն, ուսկէ վտարանդուած էր այդչափ անգթութեամբ":

"Չմտնիք զի մը Հայրս հեռագիր մը ընդունեց Լօստոնէն: Չայն կարգալուս պէս զոյնը նետեց, ու առանց բարձր ձայնու զայն ինձ տուաւ: Մարգարիտ շատ հիւանդ էր: Վարժարանին Տեսչութիւնն կը թելադրէր զայն տաք երկիր մը փոխադրել, և անկարող լինելով առանձին ճամբորդելու, կը խնդրէր որ մէկը երթայ անոր ընկերանալու համար: Տարակոյս չկար թէ Մարգարիտ սրտի հիւանդութիւն ունէր, որոյ միակ դարմանն մարդիկ գերեզմանին ձիջ գտած են: Անակնկալ հեռագրին տպաւորութիւնն անկարելի է նկարագրել: Հայրս փոխուած էր բոլորովին: Հեռակալ օրն ճամբայ ելաւ Լոստոն երթալու համար: Մեկնած պահուն մանուկի մը պէս լացաւ. առջի անգամ էր որ արցունք կը տեսնէի անոր աչքերուն մէջ":

"Երբ Հայրս վերադարձաւ, Մարգարիտ Ֆեան էր՝ մուշտակներու մէջ փաթեթուած: Դէմքը տոգոյն, նիհարցած ու վտիտ էր նա. կենդանի մեռեալ մը գտանք այդ երբեմն կայտառ ու զուարթ աղջկան մէջ: Երբ տեսաւ զիս, ինքզինքը թեքեաւ մէջ նետեց. փաթեթուեցաւ ինձի ու լալով Արմէն, ըսաւ՝ եկայ վերջապէս. ուրախ եմ որ ձեզ հետ եմ նորէն": Այս իւր խօսքերը զեռ կը հնչեն ականջիս: Մարգարիտի օրերն համրուած էին: Այդ դառն ճշմարտութիւնը կը կարգայի անոր դէմքին վրայ: Մեր տունը այդ օրէն սկսեալ սուգի տուն դարձաւ: Լոսիկ կ'ողորայինք այդ անակնկալ դժբաղդութեան վրայ: Մարգարիտ, աշխարհէ հեռաժամբաւ, անկողինին մէջ կը նստէր ժամերով՝ խոր մը տածութեանց մէջ թաղուած. առջի զուարթ Մարգարիտի ստուերն էր կարծես: Բուզկերակը օրէ օր կը սկսեալարկուէր: Կեանքը քայլ առ քայլ կը մեկնէր այդ մնաստուած շինուածքէն: Հայրս իտալիոյ զուարթ օգեւորն վրայ խօսելով՝ կը թելադրէր զինքը այդ արևի երկիրը տանիլ: Բայց Մարգարիտ կը մերժէր տունէն հեռանալ. ամառուան կըստաւելը զօրանալու համար...: Երբ գարունը եկաւ, Մարգարիտի պնդուն աւելի դուրստեցան: Աչքերուն բոլորաբը կապուող շրջանակ մը երևիլ սկսեց: Տարածամ մաշը մօտեցած էր զայն մեզմէ խելու համար: Մարգարիտ գիտէր իրողութիւնն, բայց կը թուէր թէ գոհ էր իր վիճակէն՝ այդ պարագաներու տակ:

"Ամբան երեկոյ մը սրահին մէկ անկիւնն նստած էի, պատուհանի մը առջև, երբ ըոյրս կիթառ ի ձեռին ներս մտաւ յամրաքայլ, ու սենեկին միւս անկիւնն երթալով նստեցաւ թիկնաթոռի մը վրայ: Պատուհանին վարագոյրը գիւ ծածկած էր իր տեսութենէն: Բիշ վերջ նուազել ու երգել սկսեց իր տկար ձայնով՝ "Ես պիտ' մեռնիմ", մնաս բարեաւ, սիրական"...: Արցունքները խամրած այտերէն վար կը թափէին կիթառին վրայ": (Շարունակելի)

ԱՇԽԱՐՀԻՍ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Աշխարհիս վրայ կը բնակին միջին հաշուով 1,450,000,000 անձինք: Ասոնցմէ 500,000,000-ը և կամ գրեթէ կէսը, վայելուչ կերպիւ հագուած են. 250,000-ը ընդհանրապէս մերկ կը պրտաբան. 700,000,000-ը իրենց մարմնոյն մէկ մասը կը գոցեն. միայն 500,000,000-ը կը բնակին տուներու մէջ. 700,000-ը հիւղակներու կամ քարայրներու մէջ, մինչ 250,000,000-ը ո՛չ տուն ունին ո՛չ պատասպարան:

Այս վերջնոց վրայ ունեցնելու է Հայերն ևս:

ԱՉԻ

Պատիւ ունինք ծանուցանել թէ ՏԻԳՐԻՍԻ տպարանին մէջ կը տպուին ծանուցումներ, այցիտումս, տեսարակ, և այլ ամէն տեսակ գործեր, գոհացուցիչ գներով: Մեր տպարանին մէջ տպուած ազգային և կրօնական հրատարակները կարտասպանեցնու ՏԻԳՐԻՍԻ մէջ առանց աւելորդ ծախքի:

ՄԵՐ ԿՏՐՈՆՆԵՐԸ

ՏԻԳՐԻՍԸ Հայ գաղթականութեան մէջ սարածելու համար վարչութիւնն որոշած է կտրոն մը հրատարակել թերթիս երրորդ երեսին վրայ՝ սէնթի արժողութեամբ, և իրր դրամ ընդունիլ զայն՝ փոխարէնն ի ստորեւ ծանուցուած ապրանքներէն նուէր տալու պայմանաւ, իրենց որոշեալ գներով: Այս կտրոններու գինն քանի մը շաբաթէն մտադիր ենք 1 սէնթի իջեցունել: Անոնք որ կուզեն օգտուիլ այս բացառիկ առիթէն, աշխատելու են ձեռք ձգել ՏԻԳՐԻՍԻ այս կտրոններէն որչափ որ կարելի է, ու պահել զանոնք:


Ամէն 10 կտրոնի հետ 2 հատ 2 սէնթիոց նամակադրոշմ դրկուելու է մեզ ապրանք փոխադրութեան ծախուց համար:

ՄԵՐ ՆՈՒԷՐՆԵՐՆ

Հետեւեալներն աննշան մաս մ'են այն բաղմատեսակ ապրանք զորս ունինք մեր սրամաղրութեան տակ իրր նուէր տալու համար մեր կտրոններու փոխարէն: Ասոնց բոլորի ցուցակը անկարելի է հրատարակել ՏԻԳՐԻՍԻ մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ: Այս մասին զազափար մը տալու համար կը բաւականանանք ըսել թէ այդ ապրանք կատարեալ ցանկը 126 երեսներէ բաղկացեալ տեսարակ մ'է, որոյ մէջ ոչ միայն գիններ կան, այլ ամէն իրերու պատկերներն և բացատրութիւնները գրուած են անգլիերէն լեզուով: Այս տեսարակներէ կը շրջանառու փոխադրուց 5 սէնթի նամակադրոշմի փոխարէն:


Մեր ամէն տեսակ ապրանքներէն կը յղենք նաև ամէն անոնց որք կտրոն չ'ունենալով՝ դրամ կամ նամակադրոշմ կը շրջանառու փոխարէն փոխարէն: Փոխադրութեան ծախքը գնողներուն վրայ է:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԺԱՄԱՅՈՅՑ



ԳԻՆ 1 ՏՈՂԱՐ ՄԻՍՄՆ

Մենք ԽԱՂԱՂԱՍԻՐ ԺՈՂՈՎուրդ ենք. և սարճանակի պէտքը թիչ անգամ կը զգանք: Պէտք է հատ մ'ունենալ սակայն, զի անոր պէտքը կենաց և մահու խնդիր է երբեմն:




ԿԱՅՑ ՍԱ ԿԱՐԺԷ 1 ՏՈՂ 75 ՍԹ

ՄԵՐ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՄԷՋ

Արանց և տիկնանց համար յատուկ զմեկիներ, մատանիներ, զանազան կոճակներն ևն. բաղմատեսակ են:

Այս զմեկիներու հատը միայն




ԿԱՐԺԷ 24 ՍԷՆԹ


ԱՅՍ ԿԱՆԱՆՑ ԱՍԵՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



պէտք է բացատրութիւն: Կանայք գիտեն անոնց կարևորութիւնն:




Կ'արժէ հատը միայն 52 ՍԷՆԹ



կամ 13 հատ կտրոն զորս կարելի է բոլորովին ՁՐԻ ձեռք ձգել:

ՉԱՆԱՉԱՆ ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐ

Մեր սրամաղրութեան ներքև ունինք երգեհոն, կիթառ, մանտոլին, արմոնիքս և ուրիշ նուագարաններ զիւրաժատչելի գներով: Մեր կտրոնները ծախու կառնեն զայնս Սա պատկեր խեղճ ներկայացուցիչ մ'է իրականին:



ՍԱՈՐ ԳԻՆՆ Է 2 ՏՈՂԱՐ

Այս ապրանքներն դրամով ալ կը միաճառուին: